ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

ԱՆԳԼԻԱՑԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԸ

Լոնդոն, 24 փետրուարի։

Անգլիայում վերջերքումս մեծ ջանքեր եղան ժողովրդական ուսումնարանները ձրի դարձնելու. բայց այժմ այդ խնդիրը վերջնականապէս հեռացուեց օրակարգից։

Այդ առիթով հարկ ենք համարում Անգլիայի ներկայիս դպրոցական հանգամանքների վերայ մի ակնարկ գցել։

Իսկական ժողովրդական ուսումնարանները նոքա են, որ կոչւում են board schools. Անգլիայում այն ժողովները, որոնք հաւաքւում են դպրոցական գործերի համար, կոչւում են school board (շուլ բոարդ—դպրոցական ժողովներ կամ խորհուրդներ), իսկ սոցանից հիմնւած դպրոցները կոչւում են board schols (բոարդ շուլս—ժողովների կամ խորհուրդների դպրոցներ)։

Անգլիայում ընդհանուր պարտադիր ուսումը մտցրւած է 20 տարի առաջ։ Եւ այդ միայն 1870 թուականիցն է, որ դանազան քաղաքներում և գիւղական համայնքներում կեանքի կոչեցին այդ շուլ-բոարդները, այսինքն դպրոցական ժողովները, այն էլ՝ հիմնւած ընդհանուր ընտրողական սկզբունքի վերայ։ Ընտրողական ձայն վայելում են այն ամենը, որոնք քաղաքային տուրք են վճարում, միևնոյնն է թէ որ սեռին են նոքա պատկանում, ուրեմն թէ տղամարդիկ և թէ կանայք։ Կանայք ոչ միայն իրաւունք ունին ընտրելու, այլ և ընտրւելու. և այս բոպէին այդ ժողովների կարևորագոյն անդամներից մի քանիսը կանայք են և մինչև անգամ աղջիկներ։ Այդ ժողովների կամ խորհուրդների ձեռքումն է ժողովրդական ուսումնարանների board-schools վարչութիւնը, որը սակայն գործերը վարում է համապատասխան պարլամենտից ընդունւած որոշումների՝ վերաբերեալ դասաւանդման առարկաներին, դասաժամերին և այլն։ Բացի դորանից նոքա ենթարկւած են կառավարութեան կամ «կրթական խորհուրդի» (Council of Education) վերահսկողութեան, որից նշանակւում են վերահսկող տեսուչներ։ Սոքա ներկայ են լինում քննութիւններին և նոցա զեկուցման

համաձայն տէրութիւնը այս կամ այն դպրոցին միանուագ օժանդակութիւն է տալիս։ Պարտադիր առարկաներն են միայն՝ կարդալ, գրել և հաշուել, և դրա համար տէրութիւնը վճարում է ամեն մի աշակերտի համար տարեկան 4 շիլլինգ և 6 պենս (1 ր. 50 կոպէկ ոսկի). բայց երբ տեսուչը մի ուսումնարանի համար «գերազանց» վկայութիւն է տալիս, այդ ուսումնարանը ստանում է տէրութիւնից ևս 3 շիլլինգ (1 ր.) ամեն մի աշակերտի համար, երբ վկայութիւնը է լինում «լաւ»—ուսումնարանը ստանում է 2 շիլլինգ, և երբ լինում է «բաւականին լաւ»—ուսումնարանը ստանում է 1 շիլլինգ (33 կոպ. ոսկի) ամեն մի աշակերտի համար։

Բացի դորանից տրւում են առանձին օժանդակութիւններ առանձին առարկաների համար, 1 կամ 2 շիլլինգ աշակերտի վերայ՝ անգլիերէնում, աշխարհագրութեան, պատմութեան, գծագրութեան և աղջիկների դպրոցներում նաև ձեռագործի մէջ ցոյց տուած յառաջադիմութիւնների համար։ Իսկ երբ դպրոցում ուսուցանում են նաև մաթեմաթիքա, ֆիզիքա, քիմիա, բուսաբանութիւն, լատիներէն, ֆրանսերէն և աղջիկների դպրոցներում նաև խոհարարութիւն,—այն ժամանակ այդպիսի ուսումնարանը ամեն մի աշակերտի համար, որը այդ առարկաներից առանձին քննութիւն է բռնում, ստանում է տէրութիւնից ամեն մի առարկայից 4 շիլլինգ։

Որպէս կարելի է տեսնել, տէրութիւնը թողնում է ուսումնարանների վարչութիւններին բաւականին մեծ ազատութիւն։ Այդ գլխաւորապէս նորանից է, որ ինքը գործը դեռ նոր է, որովհետև մինչև 20 տարի առաջ ժողովրդական ուսումնարաններում իշխում էր մի այնպիսի քաոս, որից դժուար էր դուրս գալ։ Դորա վերայ պէտք է աւելացնել նաև տեղական հանգամանքները. և որոշ սահմանների մէջ դպրոցական գործի ծաւալումը ծնողների և համայնքների ձեռքումն է, համապատասխան անգլիական ընտրութեան՝ իւր հակումով դէպի ինքնավարութիւնը և հակակրութիւնը դէպի կառավարութեան ամենակարողութիւնը։ Տէրութիւնը օգնում է, նպաստում է, վարձատրում է, բայց ժողովրդից ընտրուած դպրոցական ժողովները կազմում են վարչութեան գլխաւոր ֆակտորը, որպէս նաև քաղաքային հարկեր վճարողները, որոնք ընտրում են այդ ժողովները, և գլխաւոր ծախքերն են քաշում։ Դոքա, այդ հարկ վճարողները, պարտաւոր են «դպրոցական հարկ» վճարելու (school rate), որը զանազան տեղերում զանազան է, միջին հաշուով բնակարանի վարձի 3—4 տոկոսը [1]։ Բայց այդ հարկից գոյացած դումարները գործադրւում են միմիայն ժողովրդական ուսումնարանների վերայ. բոլոր աւելի բարձր ուսումնարան-

---

[1]) Անգլիայում հարկաւորութեան չափը որոշում են բնակարանի վարձով. ով իւր բնակարանին տալիս է տարեկան 100 ր., այս դէպքում պէտք է տար դպրոցական հարկ 3 կամ 4 ռուբլի, ով 500 ռուբլիանոց բնակարան ունի, նա վճարում է 15—20 ռուբլի և այլն։

ները պահպանում են աշակերտական թոշակներով, սեպհական եկամուտներով։ Բացի այդ «դպրոցական հարկից» և տէրութեան օժանդակութիւնից, դժբաղդաբար նորերումս աւելացաւ նաև մի առանձին թոշակ։ Պարլամենտը դպրոցական ժողովներին (շուլ-բոարդ) տուել է իրաւունք՝ իւրաքանչիւր աշակերտից պահանջել շաբաթական մինչ 9 պենս (մօտ 24 կ. ոսկի)։ Բայց 24 կոպէկ շաբաթական՝ այդ նոյն իսկ Անգլիայում մեծ փող է, մանաւանդ բազմազաւակ ընտանիքների համար։ Իսկ է, որ իրապէս ոչ մի տեղ այդքան չեն պահանջում, այլ պահանջում են ընդհանրապէս միայն 1 պեննի, աւելի հարուստ տեղերում միայն դրանից աւելի։ Եւ այդ փոքրերը հաւաքում են ուսուցիչները աշակերտներից ամեն երկուշաբթի առաւօտ։

Այդ կարգ ու կանոնները, որպէս տեսնում էք, կարելի է լաւացնել. մանաւանդ այդ աշակերտական թոշակը մեծ դպրոցի լարուցեց և ամեն կողմից սկսեցին պահանջել այդ թոշակների վերացումը։ Այդ պահանջում էին ոչ միայն ազատամիտները, այլ նոյն իսկ լորդ Սալսբրի իւր՝ մի քանի ամիս առաջ Նստինդամում արտասանած ճառում։

Բայց ահա ծագում է դժուարութիւն մի ուրիշ տեսակ ժողովրդական դպրոցների կողմից։ Բանն այն է, որ կան նաև՝ այսպէս կոչած՝ «կամաւոր դպրոցներ» (voluntary schools), որոնց ղեկավարում է հոգևորականութիւնը, մանաւանդ կաթոլիկ կղերը և բողոքական զանազան աղանդները։ Իսկ այդ դպրոցները պահպանում են աշակերտական թոշակներով։ Այդ դպրոցները մասամբ գոյութիւն ունէին board schools դպրոցներից առաջ և սոցա մէջ չը ձուլեցին, որովհետև այդ վերջիններում առհասարակ ոչ մի կրօն չի դաս տրւում, ուր մնաց թէ կրօնի դասաւանդութիւնը մի որ և իցէ դաւանութեան տեսակէտից կատարուէր։ Կրօնի դասաւանդութիւնը, ժողովրդական դպրոցները հիմնելու ժամանակ, տէրութեան գործը չէ, այլ եկեղեցու գործը և իսկապէս այդ կատարւում է հոգևորականութիւնից կիրակնօրեայ դպրոցներում։ Բայց դորանով չէին ուզում բաւականանալ այդ «կամաւոր դպրոցները», այնպէս որ սոքա շարունակեցին իրանց գոյութիւնը՝ «բոարդ-շուլ» դպրոցների կողքին։ Բայց նրբ վերջիններս սկսեցին պահանջել, որ թոշակները վերացուեն և տէրութիւնից օժանդակութիւն պահանջեցին,—հոգևորականների դպրոցներն էլ սկսեցին պահանջել նոյն օգնութիւնը տէրութիւնից։—Լաւ, այդ ձեզ կը տրւի, ասացին ազատամիտները. բայց ում տէրութիւնը օժանդակութիւն է տալիս, նորա վերայ էլ տարածում է իւր հսկողութիւնը։ Իսկ այդ բանից նոքա լսել անգամ չէին ուզում։ Ան ոգևորւածները, որոնք այդ «կամաւոր դպրոցներին» մեծամեծ գումարներ են տալիս, լեռ կը կանգնեն և առհասարակ այդ դպրոցները կը խորտակեն։ Ուրեմն կը մնայ որ տէրութիւնը ինքը իւր ձեռք առնի այդ դպրոցների պահպանումը։ Արդ. ժողովրդական դպրոցներում եթէ թոշակները վերացուեն, տէրութիւնը, որպէս հաշւում են,

պէտք է տալ տարեկան 2 միլլիոն ֆունտ ստերլինգ (մօտ 20 միլլիոն ոսկի բուբլի)։ Իսկ եթէ կամաւոր դպրոցներից էլ հաշիւ վերցնի տէրութիւնը, վերջինս պէտք է միանգամից վեր դնի 30—40 միլլիոն ֆունտ ստերլինգ (300—400 միլլիոն ոսկի բուբլի)։ Իսկ դորանից զարհուրում են պահպանողականները, որոնց կուսակիցն է Սալսբրիի մինիստրութիւնը։ Աղատամիտները դորանից խնդիր են չինում, թէ պահպանողականները առհասարակ չեն ուզում ուսման ձրիութիւնը։ Դորանով մեկնւում են այն տաք վիճաբանութիւնները, որ նորերումս տեղի ունեցան անգլիական պարլամենտում, որոնց ելքը այն եղաւ, որ խնդիրը անորոշ ժամանակով յետաձգուեց։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԱՐԻՆԻՑ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Կարին, 17 փետրուարի 1890 թ.

Քաղաքիս մէջ Ազգային իշխանութեան ներքև կը գտնուին չորս վարժարան. Մսրեան, Տ. Ազարեան երկսեռ ծաղկոցներու յատկացուած, Թարգմանչաց վարժարան իգական սեռի համար և Մայր դպրոցը՝ եկեղեցւոյ կից, որ 500 աշակերտ կը պարունակէ 11 դասակարգի (?) բաժանուած։

Սոյն վարժարանի տեսչութիւնը 1889 թ. սեպտեմբերի մէկին Պ. Գ. Զիլինկէրեանի յանձնուեցաւ, որ վեց-եօթը տարի առաջ բոլորովին անուս Տփխիս դիմեց, մի քանի տարի հոն ուսաւ և վերադառնալով Տաճկաստան՝ Ալաշկերտի Միացեալ ընկերութեանց վարժարանները դասատու եղաւ, այնուհետև ի Պալազիտ տէրութեան դանձապետ ըլլալէ վերջ՝ Կարին վերադարձաւ, որովհետև 1889 թւի նորակազմ ուսումնական հոդաբարձութիւնը անոր չնորհեց տեսչութիւնը, հրաժարեցնելով նախկին տեսուչ Եղիշէ էֆ՝ Տուրսունեան։

Բայց ոչք են դասատուներն Մայր Վարժարանին։

Ահաւասիկ ամենէն կարևոր և կենսական խնդիր մը մեր հայ պատանեաց, մեր ուսանողաց համար։

Կաւկասեան հայք, որ կրթական խնդրոց մէջ մեզմէ խիստ եռանդուն են, որ և մեզմէ աւելի լուսամիտ են, չը պիտի զարմանան երբ իրանց լրագրաց էջերուն մէջ կարդան թէ՝ Կարնոյ ազգային վարժարանաց դասատուներուն մեծամասնութիւնը կը բաղկանայ 15 կամ 19 տարեկան թերուս պատանիներէ, որք 50, 60 և 70 դրուշ (ալտինքն հինգ կամ վեց բուբլի) ամսականաւ կը դասախօսեն։